



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material










315

# ՎԱՐԴԵՆԻՆ

ԿԱՍ

ՅԻՇԱՏԱԿ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Ի ԳԱՂՂԻԱՐԷՆԷ

ՅԱԿՈԲ Մ. ՉՐԱԳԵԱՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԷԿԵՆՏՐՈՆԵԱՆ

1873



3157



Հայ Սրբին զարդացեալ մասին հա-  
մար ընթերցանութեան արժանի ընտիր  
վէպեր չեն պակտիր այսօր բարեբաղդա-  
բար, ինչպէս են Պօղ Վերգիին, Թախա-  
կան Հրեայ, Սելվի Փելլիո, Գաղանի Հա-  
րախնո-Լեան, ևն. որք իրենց սեռին մէջ  
չնորհիւ իրենց մեծարոյ թարգմանչաց  
հանրածանօթ ճաշակին ու տազանդոյն՝  
Հայկական մատենադարանին ճոխութիւ-  
նը կառուելուն :

Բայց նկատելով որ ազգային վարժա-  
րանաց գեռահաս ուսանողաց ընթեր-  
ցանութեանն համար աշխարհիկ լեզուա-  
բարոյալից վէպեր կը պակտին տակաւին,  
ներկայ գրքոյկս յարմարագոյն գտայ,  
ի Գաղղիերէնէ թարգմանելու, զի դե-  
ռահաս ուսանողք աւելի տրամադիր են  
այսպիսի պարզ և բարոյալից վէպերով  
զարդացնել իրենց մտաւորականը, քան  
Ռօտէնի մը զարհուրելի խարդաւանաց :



և ժան վալժանի մը դերմարդկային  
դիւցազնութեանց նկարագիրներով:

Դատելէ յառաջ՝ հասկնալ պէտք է,  
և հասկնալու համար՝ վարժ դատողու-  
թիւն: Ուստի և ձանձրոյթէ աւելի բան  
մը չեն կրնաք մատակարարել բարձր  
վէպեր՝ նորավարժ պատանեկաց համար:

Ի վերջին բան՝ կը խնդրեմ իմ Մեծ.  
պաշտօնակիցներէս, Ազգ. պատուարժան  
դասատուներէն որ եթէ յարմար դա-  
տին՝ բարեհաճին որ և է եղանակաւ ի-  
րենց ազնիւ ուսանողաց կարդացնել սոյն  
գրքոյկը և քաջալերել զիս ազգային  
պատանեկութեան առաւել ևս կարևոր  
ծառայութիւններ մատուցանելու ըզձիս  
մէջ, որուն նուիրած եմ կեանքս իբրև  
վարժապետ:

Յ. Մ. Զ.



## ՎԱՐՊԵՆԻՆ

Կ Ա Մ

ՅԻՇԱՏԱԿ ԵՐԱԵՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՌԱՔԻՆԻ ՄԱՐԴԸ.

ՆԱԻԱԲԵԿՈՒԹԻՒՆ

Պ. Աւրմարնշանաւոր տաղանդի տէր՝  
և չափազանց բարեսիրտ ու հարուստ վա-  
ճառական մըն էք. իր մարդասիրութեամ-  
բը ամենուն սիրտը կը գրաւէք և իր ա-  
ռաքինի գործերը ու վսեմ խօսքերը  
յարգելի կընէին զինքն ամենուն:

Թէև տարիքն առած էք, բայց տա-  
կաւին երիտասարդական առոյգութիւն



մ'ունէր, որն որ իր կենցաղոյն ամբօթութեան անժխտելի մէկ ապացոյցն էր. որով զինքն առաջին անգամ տեսնողները իր բուն տարիքէն տասը տարի նուազ ծերացեալ կը համարէին զայն:

Հազուատը պարզ էր, և իրեն անբաւ հարստութեան տէր ըլլալը՝ կրած ազամանդեայ մատանիէն կը հասկցուէր: Բնակարանին ներքնահողմը անպաճոյճ և համեստ էր. երեւելի նկարչաց քանի մը դործերէն զատ բան չէր տեսուեր հոն:

Պ. Ալքմար իր յարաբերութեանց մէջ այնպիսի կատարեալ կարգ և ճշգրտութիւն և այն աստիճանի արդարասիրութիւն և աղնուութիւն կը պահէր, որ ամեն ոք կը վապիւքէր բարեկամանալ իրեն հետ:

Շատ անգամ զինքը կը կշտամբէին շատ մը մանր մունր առետուրներով ալ զբաղելուն համար, որոնք դոյզն շահ մը կը բերէին իրեն և սակայն շատ անգամ մեծամեծ վնասուց պատճառ կըլլային:

Բայց այս զանազան զբաղմունքները թշուառ՝ սակայն ժրջան ընտանեաց աշխատութիւն մը ճարելու համար էին. և Պ. Ալքմարի համազումն այն էր՝ թէ

այսպիսեալ միայն կրնայ բարերարած ըլլալ:

Իրենց ապրուստը ճարելու անկարող ողորմելիներուն լուելեայն ձեռնտու կըլլար, և մնանկացեալ վաճառականներն անպատուութեանէ կազատէր՝ առանց ինքզինքն յայտնելու մեծագումար նպաստներ ընելով անոնց:

Շուայնները միայն չէին յաջողեր իրեն այս շնորհացը արժանանալու. վասն զի Պ. Ալքմար հազուագիւտ յատկութիւն կը համարէր անտեսադիտութիւնն ու անդուլ աշխատասիրութիւնը:

Տասն և հինգ տարիէ՛ ի վեր իր ամուսնոյն հետ սերտ սիրով կը կենակցէր, զոր ո՛չ գեղեցկութեանը և ո՛չ ընչիցը համար ընտրած էր. զի կինը զրեթէ բուրովին զուրկ էր ասոնցմէ. այլ անոր բարեսրտութեանը, համեստութեանը և այլ առաքինութեանց համար՝ որք Պ. Ալքմարի համար ծանրագին օժիտ մ'էին: Բարեբարոյ ծերունին այնչափ սգաց իր ամուսնոյն մահուան վրայ՝ որ մէյմ'ալ բնաւ կարգուիլ չուզէր:

Բոլոր իր զաւակներէն, որք մատաղ հասակնուն մէջ մեռած էին, միայն Լուդովիկոս ողջ մնացած էր, որ ան ատեն



20 տարեկան էր և իր հօրը կերպարանն ունէր :

Լուդովիկոս առոյգ , գեղեցիկ , իր ձևերուն և շարժմանց մէջ բարեկիրթ և խել մը ազնիւ յատկութեանց տէր ըլլալով՝ զինքը տեսնողներուն սիրելի ըլլալէ զատ՝ իր հօրը մահ ուրախութիւնն էր : Անգղիա դացած էր հոն գործեր տեսնելու և վաճառականական ուսումը կատարելագործելու համար . հայրն ալ ամէն օր իր դարձին կ'սպասէր :

Մըրկալից օրուան մը իրիկունք , երբ Պ . Ալքմար իր համարակալին Պ . Վօլմիւթի հետ , որ նաև իր մանկութեան բնկերն էր , կը ծխէր և սուրճ կը խմէր և Լուդովիկոս վերադարձին առթիւ կատարուելիք հանդիսի մը նախապատրաստութեան վրայօք կը խորհրդակցէր , թղթաբերը ներս մտաւ և նամակի ծրար մը յանձնեց անոր :

Պ . Ալքմար զանոնք հետզհետէ կարդաց , և երբ անոնցմէ մին՝ որ անապարանօք կնքուած էր , աչքէ անցուց , երեսին գոյնը նետեց : Համարակալը՝ սարսափած հարցուց . « Աստուծոյ սիրոյն համար ըլլայ , ըսէք , ինչ ունիք » : « Դուն կարդա » , ըսաւ Պ . Ալքմար , նամակն

անոր երկնցունելով : Աս ըսելով բարի ծերունին թիկնաթուին վրայ ինկաւ մընայ , ի խորոց հառաչելով և աչքերը դէպի երկինք վերցնելով .

Պ . Վօլմիւթ նամակն աչքէ անցունելով , տեսաւ որ Համպուրկի թղթակիցնին կը ծանուցանէր նաև ու մը խորտակուիլը :

Ասի ճիշդ այն նաւն էր , որով պիտի վերադառնար Լուդովիկոս :

Վօլմիւթ թէ և այս աղէտալի գուժին վրայ արտմեցաւ , բայց ջանաց ողբուորել իր բարեկամը , նկատել տալով անոր որ՝ նամակը կը ծանուցանէր թէ շատերն աղատած են նաւաբեկութենէն և թէ կարելի էր որ Լուդովիկոս ալ անոնց մէջ ըլլար և թէ՛ վերջապէս կարելի է որ իր գործերովը ցայն վայր յԱնգղիա գանուէր :

« Թեթև յոյս մը կը զարթուցանես սրտիս մէջ , պատասխանեց Պ . Ալքմար . բայց վախնամ թէ զայն մտեալ պիտի տեսնեմ : Ես հիմա ամեն բան կ'մանամ » :

Աս ըսելով զանգալին հնչեցուց և հըրամայեց իր ծնողներուն միոյն՝ երթալ թղթատունը աղաչել վերատեսչին , որպէս



զի սուրհանդակ մը զրկէ իրեն, որու միջոցաւ կուզէր նամակ մը զրկել ի Համպուրկ :

Պ. Ալքմար նամակը գրած ատենը վճարութեամբ և միւս պաշտօնակալները տեղւոյն գլխաւոր վաճառականներուն գացին հասկնալու համար թէ՛ նաւուն խորտակուելուն վրայօք բան մը գիտէի՞ն :

Լուր բերին՝ թէ նաւաբեկութիւնն ստոյգ է . բայց տասն և մէկ հոգի աղատած են, որոց մէջ կը գտնուի իր ծառայողն հանգերձ երիտասարդ մը՝ անունն անծանօթ :

Պ. Ալքմար այս լրոյն վրայ սակաւ ինչ սիրտ առաւ . բայց դարձեալ անհամբերութեամբ սուրհանդակին դալուն կըսպասէր . և եթէ իր աստուածպաշտութիւնը չըլար՝ պիտի ընկճէր այնչափ մը տատանջութեանց ու ցաւոց ներքեւ :

Համայն քաղաքացիք որք կը սիրէին զԼուդովիկոս՝ անհամբեր անոր վրայօք լուրերու կ'սպասէին :

Վերջապէս նամակին պատասխանն եկաւ և վաճառականն իմացաւ որ ստուգիւ Լուդովիկոս այն նաւուն մէջ է եղբոր, բայց ոչ մահու ընէ ազատեալներուն թիւէն :

« Եղիցին կամք քո տէր, քու տնօրինութիւնդ բարի է », գոչեց դժբաղդ ծերունին իր գլխուն եկած թշուառութիւնն հասկնալով : Այնուհետեւ իր խուցը քաշուեցաւ՝ մերժելով ևս մերձաւորաց մսիթարութիւնները և աղօթիւք միայն մսիթարուիլ ուզելով :



ԳԼՈՒԽ Բ.

Պ. ԱԼԲՄԱՐԻ ՄԱՋԸ

Այն բօթալից նամակին գալէն քանի մը օր ետքը նաւաբեկութեան վրայօք տեղեկութիւններ տալու համար ծեր նաւաստի մը եկաւ Պ. Ալքմարի տունը որ արդէն իր որդւոյն սուգը պահել ըսկըսած էր :

Նաւաստին ներս մտաւ :

« Այնպիսի փոթորիկի մը բռնուեցանք, ըսաւ, զոր կենացս մէջ բնաւ տեսած չէի :

« Մըրիկը՝ արեւ մարը մանեղէն քանի մը վայրկեան ետքն սկսաւ և նաւերնիս հողմին անդիմադրելի բռնութեան չկըրնալով տոկալ խոտորեցաւ իր ընթաց :



քէն . գիշերն այն աստիճան միժաղներ .  
ցաւ որ երկու քայլ անդին գտնուած  
առարկայ մը աննշմարելի էր :

« Գիշերն ի բուն ակաց ձեռքը խա-  
ղալիկ մնալէ ետքը՝ առաւօտեան ժամը  
երկուքին ցնցում մը դգայինք նաւուն  
մէջ որ զմեզ ՚ի ծովեզր մղեց և հակո-  
չառաչմանէ մը հասկցանք որ նաւը խը-  
րած էր ՚ի ցամաք :

« Աս միջոցին ալիքները ամեն կողմէ  
պաշարեցին նաւը՝ որ քանի մը վայրկեան  
եաքը կտոր կտոր եղաւ : Ղեկավարը ,  
եօթն նաւաստիք , երկու անցորդք և ես  
ժայռերուն վրայ նետուելով ազատե-  
ցանք , բայց նաւաստեան ու մնացեալք  
ծովակուր եղան :

« Եստ զաւ դգայինք , Պ . Ալքմար ,  
ձեր որդւոյն վրայ , ըսաւ նաւաստին  
խօսքը շարունակելով և աչքերը սրբե-  
լով , վասն զի բարի և վեհանձն էր նա :  
Ամենքնիս ալ սիրալիբ յօժարութեամբ  
մեր կեանքը պիտի զոհէինք զայն ազա-  
տելու համար . բայց այդպիսի բան մը  
մտածելու ժամանակ անդամ չունեցանք :

« Միտքս կուգայ որ՝ նաւաբեկութեան  
իրիկունը նաւուն տախտակամածին վրայ  
աւեսայ զինքը . ուր նստարանի մը վրամ՝

բազմած՝ նամակ կը կարդար . քոյն ալ  
կարմիր թղթապանակ մը կար : Այնու-  
հետեւ ալ չտեսայ զինքը . նաւուն բե-  
կորներուն մէջ իր թղթապանակը միայն  
գտայ , և ահաւասիկ Չեղ բերի՝ մտա-  
ծելով որ թերեւ կարեւոր գրութիւններ  
կը պարունակէ » :

Պ . Ալքմար առաւ բացաւ թղթա-  
պանակը և աւ իւր որդին գրած բոլոր  
նամակները մէջը գտաւ : « Խեղճ Լուգո-  
վիկոսըս , ըսաւ , խանդաղատանաց ար-  
տօսը հեղլով , բոլոր դրկած նամակնե-  
րըս խնամք պահած՝ և ըստ իմ հրամա-  
նի՝ շատ անգամ բացած կարդացած է » :

« Լացէք , պարոն » , ըսաւ ձեր նա-  
ւաստին , ձեր որդին արժանի է սղբոց .  
ես կուզէի՝ որ այս պահուն ձեր քոյն  
ըլլար նա և իրեն տեղը ես ծովուն յա-  
տակն ըլլայի , վասն զի ինքը կրնար բո-  
լոր աշխարհի օգտակար ըլլալ , մինչդեռ  
ես ալ բնաւ բանի մը չեմ գար » :

Նաւաստին հետեւեալ առղերով վեր-  
ջացուց իր պատմութիւնը :

« Նաւաբեկութեան հետեւեալ օրը  
մերկ ժայռի մը վրայ գտանք ինքզինք-  
նիս՝ ամեն կողմէ ակօք չըջապատեալ ,  
ուր անսթութեանէ և ծարաւէ պիտի մեռ-



նէինք . որովհետեւ քանի մը խեցեմորթէ՝  
 և ժայռին պատառուածքներուն մէջ  
 հաւաքուած սակաւ ինչ անձրեւի ջրէն  
 զատ բան չկար : Վայրկեանէ վայրկեան  
 մահուան կսպսէինք . բայց Աստուած  
 նաւ մը զրկեց մեզ այն պահուն՝ որ զմեզ  
 իր մէջն առնելով տարաւ ձգեց 'ի Համ-  
 պուրկ , նաւերնուս կորստեան լրոյն հետ  
 միասին » :

Մինչև հոս՝ նաւաստին իր պատմու-  
 թիւնն աւարտելով՝ Պ . Ալքմար թղթա-  
 պանակէն դանձատուն մը հանեց և ըսաւ  
 ծերունոյն : « Առէք սա , 'ի վարձատ-  
 րութիւն ձեր բարեարտութեան և որդ-  
 ւոյս վրայ ունեցած սիրոյն : Գանձապահս  
 թնղ մետաղեայ դրամի վերածէ զայդ ,  
 և կը յորդորեմ զձեզ որ շահու տաք՝  
 կենաց վերջին օրերնուդ մէջ աստով մխի-  
 թարուելու համար » :

Նաւաստին աս ճոխ պարզեւին վրայ  
 « քանչացած » շնորհակալ եղաւ Աստուծոյ  
 և Պ . Ալքմարի ու բաժնուեցաւ :

Լուդովիկոսի մահն այնչափ տպաւո-  
 թութիւն մը ըրաւ անոր հօրը վրայ , որ  
 խեղճին առողջութիւնն օր ըստ օրէ կը  
 վատանայր : Կիրակի առտու մը եկեղե-  
 ցին ջերմեռանդօրէն աղօթելէ ետքը

երբ տուն դարձաւ՝ սովորականէն աւե-  
 լի անհանգստութիւն մը զգաց և հա-  
 զուստներն հանելու ժամանակ չունենա-  
 լով՝ լքեալ , ուժաթափ՝ թիկնաթողին  
 վրայ ինկաւ :

Պ . Վօլմիւթ , որ միշտ տիրոջն հետ  
 էր՝ քովը կեցաւ . այն պահուն , յուսալով  
 որ քիչ ատենէն ինքզինքը կը դանէ :

« Սիրեցեալդ իմ Վօլմիւթ , ըսաւ  
 Պ . Ալքմար , ես այս կենաց վրայ բնաւ  
 յոյս չեմ դնել , ուրիշ աւելի գեղեցիկ  
 յոյսեր ծնունդ առնուլ կ'սկսին սրտիս  
 մէջ : Ես ուրիշ աշխարհի մը մէջ պիտի  
 գտնեմ » ինչ որ քու բարեկամութիւնդ  
 ինձ հասկըցունել կուզէ : Կենաց հացն  
 առի սյսօր ուստի և պատրաստ եմ այս  
 կեանքէն բաժնուելու . պարտիմ ուրեմն  
 այժմ գործերս կարգադրել . անցիր սա  
 գրասեղանին գլուխը և իմ վերջին հրա-  
 մաններս գրի առ , յետոյ թող նստարն  
 ու վկայք ալ ստորագրեն :

« Այն բազում հարստութիւնք , որոնց-  
 մով հաճեցաւ Աստուած զիս ընուլ՝ ազ-  
 գականացս բաժին պիտի մնան . թէև ի  
 մօտոյ չէ իրենց ազգականութիւնը՝ բայց  
 ստացուածոցս մեծագոյն մասը պիտի  
 վայելեն . սա՛ պայմանաւ որ՝ իրենք խը-



նամօք դորձած ելով իրենցմէ ետքն՝ ալ զաւանդներն ին վայելեն . այսու ամենայնիւ կուզեմ որ եթէ ապագային մէջ այս վերջիններն բարի հանդամանաց տէր չըլլան՝ սկուզ մ'անդամ բաժին չունենան :

« Միրեցեալդ իմ վօլմիւթ , թէ զձեզ և թէ բոլոր հաւատարիմ պաշտօնակալներս , որք օգնեցիք իմ հարստութեանս ամանը՝ պիտի վարձատրեմ իրովին : Աղքատներն ու վարժարաններն ալ մտքէ ելլելու չեն :

« Գրէ՛, վօլմիւթ , այս տողերը շուտով դրէ , ինձ այնպէս կուզայ որ քանի մը վայրկեանի կեանքս միայն մնայ » :

Յանկոթ՝ կանկ առաւ Պ . Սլքմար . « Տէրը զիս առ ինքն կը կոչէ , ըսաւ , և կուզէ ինք լինցունել , ինչ որ ես անձամբ լինցնելու ժամանակ չունիմ » :

Սո ըսելէն ետքը լուեց , և քանի մը վայրկեան լուելեայն աղօթելէ ետքը՝ ձայն բառնալով ըսաւ . « ընդունէ զիս , Տէր , ըսու ծոյգ , և տար միացուր զիս անոնց զորս կորուսած եմ » : Այնուհետև աւանդեց իր հոգին առանց ցնցման ու ցաւոց :

Վօլմիւթի փրցուցած ճիւղէն՝ տանը

մէջ գտնուողները հոն վազեցին , և ամեն ոք սարսափելով անձայն մնաց , տեսնելով զՊ . Սլքմար թիկնաթուռն վրայ , գլուխն իր բարեկամին կրծոց վրայ դըրած և առ յաւէտ զբաւեալ ի կենաց :

Հանդուցելոյն պատկառելի դէմքը կ'արտայայտէր տակաւին այն բարութիւնն ու աղնուութիւնը , որովք վառեալ էր իր կենաց մէջ : Ներկայ գտնուողները լուռ ու մունջ ձեռու ընկն իրար կը ցած՝ կեցած էին . առ որս ըսաւ վօլմիւթ . « իր աշխատութիւնն այս աշխարհիս վրայ պատուով լրացնելէ ետքը՝ դէնաց երկինք՝ իր առաքինութեանց պըսակն ընդունելու » :

ԳԼՈՒԽ Գ .

ԺԱՌԱՆԳՆԵՐԸ .

ԱՆԱԿԼԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ .



Պ . Սլքմարի մահը անկեղծ ցաւօք ու կարեկցութեամբ լցուց համայն քաղաքը . միայն իր ազգականներն էին որք



տեսնելով իրենց բաժին մնացած անբաւ հարստութիւնը՝ չէին կրնար ուրախութիւննին ծածկել : Յուղարկաւորութեան հանդիսին ժամանակ մինչ ամեն ոք անկեղծ արտասուք կը թափէր՝ խել մը ժառանգորդներ աչքերնին թաշկինակով կը դոյէին, որպէս զի դէթ կաթիլ մ'արտօսը չթափելնին չտեսնուի :

Թողուած ժառանգութիւնն արդարև անհուն էր : Միլիոններով ֆիօրինի կը հասնէր . բայց երբ բաժնելու ժամանակն եկաւ , Պ . Ալքմարի որկորուստ ժառանգորդները շատ քիչ դասն զայն , և ծայրայեղ անարդանօք և չարաչար խստութեամբ ու թշնամանօք վարուեցան հաւատարիմ և ծերունի Պ . Վօլվիսթին հետ :

Հանգուցելոյն ամառ ծառայներէն ոչ ոք գոնէ չնչին պարգև մ'առաւ , մինչև իսկ ամբաստանուեցան ալ : Ամեն չարթու տրուելիք սովորական ողորմութիւններն ալ դադրեցան և անոնց համար յատկացեալ դումարները անվճար մնացին :

Ազդականաց մէջ վէճ ծագելով դործը մինչև դատի ելաւ . բայց իւրաքանչիւրին իրեն ինկած բաժինը վայելելու

անդուսդ տենչը վախճան տուաւ վէճին : Տակաւին ստակը՝ ձեռքերնին չանցած անոր մէկ մասը ծախսուեցաւ . մէկը տուն շինել տուաւ , ուրիշ մը ամարանոց դնեց . երրորդ մ'ալ՝ իր գործերը թողլով խրախճանաց , խնճոյից ու հաճոյից ետևէ եղաւ . բայց ոչ ոք խորհեցաւ իրեն հանդուցեալ ֆազգականին գերեզմանին վրայ խոնարհ շիրիմ մը կանգնել . շատ յորդորներ կարդացուեցան իրենց այս մասին , բայց ամենքն ալ միաձայնութեամբ մերժեցին իրարու ազահութիւնը երևան չհանելու համար :

Ճառանգութեան ամենամեծ մասը Պ . Փրաք անուն մէկու մը բաժին ինկաւ , որ Պ . Ալքմարի հաստատուէն և հանդիստ բնակարանը աւելի շքնաղ ճաշակաւ ու ձևով մը վերանորոգեց և հետաքրքրական պերճութեամբ կահաւորեց զայն :

Ճաշի սենեակը մեծցուց և վառաւոր հայելիներով ու դեղեցիկ նկարներով և ձեղունն ալ ծանրագին ջահերով զարդարեց : Տունն այսպէս յարդարեթեաքը մեր նոր տանուտէրը ընթրիք մը և պարահանդէս մը տուաւ իր ժառանգակիցներուն :



Պարոնն այսպէս կ'ուզէր նուիրագործել իր նոր ապարանքը :

Հարիւրաւոր մտներ կը լուսաւորէին սրահը՝ որոց լոյսը շատ մը հայելիներէ անդրադառնալով սեղանը դարդարող աննման սպասուց փայլը կ'աւելցնէր :

Պ. Ալքմարի բոլոր ժառանգորդներն 'ի շնորհս իրենց բաղդին շողջողուն զարդուք և պաճուճանօք կը փայլէին :

Տիկնայք և մանկամարդ օրիորդք առաւել ևս կը հրճուէին սգոյ դրեսաները թողով ծանր դարդեր հագած ըլլալնուն համար :

Պ. Փրաք, որ ստակի ուժով յաջողած էր իր անուան քը մտքնիկն ալ աւելցնել աալու, կը կոչուէր Պ. քը Փրաք և իր կնոջ հետ կը ջանայր իրենց ազդատոհմին վայելուչ ազնուականութեամբ ընդունիլ հրաւիրեալները :

Օրիորդ ալ Փրաք իրենց միամօր դուստրը իշխանուհւոյ մը պէս հազուած հազարումէկ դիրքեր կառնոյր իր ահուճքը փայլեցնելու համար :

Վերջապէս սոյն մեծապայծառ խընճոյքէն ետքը պարահանդէսն սկսաւ :

Նուագարանաց ներդաշնակ եղանակներով մինչև կէս դիշերուան մօտ պա-

րեցին, բայց ժամը հազիւ տասներկուքն հնչեց՝ և ահա նուագարանը լուեց, պարերը դադրեցան, և սարսափ պատեց ամենուն գէմքին վրայ. զարմացման կամ ճիշդն ըսենք զարհուրանաց ճիշեր արձակեց ամեն ոք, երբ սրահին դուռը բացուելով տխրադէմ և սգազգեաց պատանին Ալքմարեան ներս մտաւ :

Արդարև, ուրուականի մը երևումն այսչափ արհաւիրք չէր կրնար ազդել հանդիսականաց վրայ. 'ի դուր կը ջանար ամեն ոք կեղծ ժպիտներով բարեւել նորեկը. ժառանգութեան ձեռքէ ելնելն աներկբայելի էր. երջանիկ երագէ մը ետքը ահարկու զարթուցման մը հակապատկերն էր իրենց անցեալը, յուսահատ սրտամտթիւն կ'արտայայտէր ամենուն գէմքը : Աւելորդ է ըսել թէ Պ. Փրաքի բանը բուսած էր և իր տիկինն ու դուստրը խելքերնին թուուցած էին :

Բայց վեհանձն լուղովիկոս, որոյ համար ոչ ոք մտքէն կ'անցընէր թէ իր ներկայութեամբը ահուդողի մէջ պիտի ձգէ զհանդիսականս, արդահատեցաւ վրանին և հեռացաւ անկէ :


Լուղովիկոս թէ և շատոնց 'ի վեր



սրահէն դուրս ելած էր, բայց տակաւին  
ասդին « արթուն ենք՝ թէ կ'երազենք »  
կը հարցունէին իրարու :

Եւ արդարեւ գերեզմանական էր  
Ալքմարեանի այն երևումը :

Տանուտէրն ու հանդիսականք ի-  
րենց պարահանդէսն ու խրախճանը սոյն  
աղէտալի վերջաբանով կնքելով ցաւ ՚ի  
սիրտ և յակամայս բաժնուեցան իրարմէ :



### ԳԼՈՒԽ Դ .

#### ՓՐԵՄՈՒԹԵՒՆ .

#### ՅԱՄԵՐԻԿԱՅ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԸ .

Պ. Ալքմարի ժառանգները բոլորովին  
սրտաբեկ եղած՝ չէին կրնար խելք հաս-  
ցունել թէ ինչպէս Պ. Ալքմարեան կըր-  
ցաւ իրենց երևարովահաբեկ ընել զիրենք,  
մինչդեռ մեռած կարծուած էր և այն-  
պէս իսկ արձանադրուած էր քաղաքա-  
պետութեան տօմարին մէջ :

Պատանւոյն երևումը թէ և նորանը-  
շան՝ բայց իրականութիւն մ'էր իսկովին :  
Հոս հարկ կ'ըլլայ նաւաբեկութեան օ-  
րէն մինչև ցայն վայր Լուդովիկեայ անց-  
եալն ու արկածներն յիշել :

Նաւաբեկութեան գիշերը Լուդովի-  
կոս գերանի մը վաթտուած էր, զոր  
քանի մը վայրկեան ետքը ալիքները մը-  
ղեցին վարեցին ծովին բացերը : Երբ մը-  
րըրիկը գաղբելով ծովն իր հանդար-  
տութիւնը գտաւ՝ Լուդովիկոս որ մահ-  
ուան գէմ խեղախող մարդու մը բոլոր  
քաջութեամբ գերանին վաթտուած էր՝  
ուսկաւ ինչ ինքզինքը գտաւ և նստաւ  
իր միակ ազաւէն գերանին վրայ :

Արևը ծագելու ատեն երկնքէն ու  
ծովէն զատ բան չտեսաւ իր շուրջը, և  
այնպէս օրն ի բուն ծովուն վրայ ծվալէ  
ետքը գիշերը վրայ հասաւ որ կարծես  
պատանւոյն վերջին վայրկեանները կը  
գուժէր :

Լուդովիկոս իր մօրը գիրկը աստ-  
ուածային երկիւղիւ մեծցած, և վըշ-  
տաց մէջ աղօթից դիմելու վարժուած  
ըլլալով՝ ջերմեռանդօրէն սկսաւ աղօ-  
թել ու ըսել. « Կրկէ դիս, Տէր, իսկ  
թէ օրհնեալ կամքդ կը անօրինէ որ



մեռնիմ՝ մխիթարէ իմ հայրս և զօրու-  
թիւն տուր ինձ, որպէս զի հաստատա-  
մտութեամբ և անտրտուն շ աւանդեմ  
հոգեակս առ քեզ » :

Երբ աղօթքը լնցուց՝ յանկարծ ի  
հեռուստ նաւ մը նշմարեց որ դէպ իրեն  
կուգար. յուսալից ձայն մ'արձակեց  
նաւուն, առին իր ձայնը և ազատեցաւ  
վտանդէն :

Լուգովիկոս նաւապետին շնորհակալ  
ըլլալէ և սակաւ ինչ ուտելիք բերանը  
դնելէ ետքը՝ իր արկածները պատմեց  
անոր և աղաչեց որ զինքը ցամաք հա-  
նէ :

« Բարեկամս, ըսաւ նաւապետը,  
ի բոլոր սրտէ կը յօժարէի ձեր խրնդ-  
րանաց, բայց՝ ինչպէս կը տեսնէք՝ վա-  
րած նաւս պատերազմական ըլլալուն՝  
անկարելի է ինձ ճամբէս շեղիլ, և եթէ  
զձեզ իր մէջն ընդունող ուրիշ նաւու մը  
չհանդիպինք, կը պարտաւորիք մինչև Ս-  
մերիկա գալ հետս : »

Անդրիական այս նաւն ամենայն յա-  
շողութեամբ իր որոշեալ տեղն հասաւ  
անվտանգ որ Սմերիկայի վտարիկ կղզե-  
կաց մին էր :

Լուգովիկոս անհնարին վիշտ զգաց :

Երբ իմացաւ թէ այն նաւահանգստին  
մէջ աշխարհիս դէպի որ և է մէկ կողմը  
առազանտ պարզելու պատրաստ նաւ  
չկայ :

Նաւապետը բարեպաշտ և ազնուա-  
բարոյ մէկն ըլլալով և անոր սրտեղու-  
թիւնը նշմարելով մխիթարութիւններ  
չուայլեց իր ազատելոյն : « Տարի մը, ը-  
սաւ, այս կղզւոյն մէջ կեցէք հետս,  
մինչև որ տարեկան շրջանս լմնաց և  
ուրիշ նաւ մը գայ ինձ յաջորդելու :

« Աստուծոյ մեղ արժան համարած վի-  
ճակները միշտ օգտակար են, բաւական  
է որ մենք գիտնանք օգտիլ : »

« Թերևս այս կղզւոյն մէջ անցունելիք  
օրերնիդ նպաստաւոր ազդեցութիւն  
մ'ունենան ձեր կենաց վրայ » : Ասկէց  
դատ նաւապետը ծովահայեաց խոց մը  
տուաւ իրեն և խնամ կը տանէր, որպէս  
զի բանէ մը չզրկուի Լուգովիկոս :

Լուգովիկոս զրօսանաց համար բոլոր  
կղզին պտտեցաւ, ուր շաքարեղէղնի և  
կովենիի ծառեր տեսաւ, զորս սևեր մը-  
շակած էին, ուրեք ուրեք գեղեցիկ ա-  
մարանոցներ կը տեսնուէին. երկնաբերձ  
և անտառախիտ լեռանց շղթայներ ձըզ-  
ուած էին բերրի դաշտերու մէջէն



դաշարադարձ բլուրներ, մշակեալ այգեստաններ, ասդին անդին գտնուող անտառակներ, ջինջ առուակներ որոց ամուռնքը հինաուրց թմբիներ և կաղամակներ բռնած էին՝ ակնահաճոյ հօրիզոն մը կ'ընծայէին կղզեկին։

Քիչ ատենէն անձրևոտ եղանակն սկսաւ. խեղճ Լուդովիկոս անտանէջի ձանձրութով մը կը նեղուէր, վասն զի թէ և կը սիրէր միշտ հետն ըլլալ նաւապետին, բայց այս վերջինը օրն 'ի բուն դառնեալ ըլլալուն չէր կրնար իր հիւրին սրտաքը լեցնել։

Լուդովիկոս ան ատեն գիրք ուղեց նաւապետէն, բայց բոլոր կղզոյն մէջ գերմաներէն գիրք չգտաւ. բարեբաղդաբար Անգղիերէն գիտնալուն՝ աղաչեց նաւապետին որ Անգղիերէն գիրք մը տայ իրեն։

«Ուրիշ գիրք չունիմ, ըսաւ նաւապետը. գրոց ընտրեալոյնը, Ս. Աստուածաշունչը կուտամ քեզ։ Ազգականներէս մին որ իրլանտայի մէջ եպիսկոպոս էր, ընծայ տուաւ ինձ զայդ և պատուիրեց որ մէկու՞մը չտամ, վասն զի շատեր իրենց ճշմարիտ երանութիւնն

ու լաւութիւնը չգիտնալով՝ չեն հասկընար զայդ։

«Ես գՁեղ այդպիսեաց կարգը դատած չըլլալուս համար կուտամ ձեզ, առէք, կարդացէք։»

Շնորհակալութեամբ ընդունեց Լուդովիկոս իր անկեղծ հիւրընկալին ընծայն և ամեն օր Ս. գրքին մէջէն շատ գլուխներ կը կարգար, և որովհետև ուրիշ խորհուրդներով դառնեալ չէր՝ շատ մը ընտիր պատուիրաններ միտքը պահեց, որք առաւել ևս ամրապնդեցին իր բարեպաշտութիւնը և առ Աստուած ուսու ֆրկիչն ունեցած ջերմ սէրը։

Չմեռն այսպէս անցնելէ ետքը երբ զարնան դռները բացուեցան, նաւապետը որսի տարաւ իր հիւրը։ Աս մարդը՝ որ բուսաբանութեան ալ իրիտ հետամուտ էր՝ թէ որս և թէ նոր տունկ մը գտնելու մասին հաւասար հետազոտութիւն կրնէր. այնպէս որ՝ անծանօթ տունկ մը գտածին պէս՝ ուրախութենէն ինքզինքը կորուսած՝ «Տէր Աստուած, կը գուչէր, ի՞նչ հրաշալի նորանորութիւններ կան ձեռակերտացող մէջ»։

Լուդովիկոս ալ հետզհետէ սկսելով ճաշակ զգալ սոյն ուսման վրայ, նաւապե-



աբ գիրք մը տուաւ իրեն, որոյ շնորհիւ  
 առկրեցաւ ճանչնալ Աստուծոյ ձեռադոր-  
 ծայ աս օգտակար մտար. և վերջապէս  
 իր հետաքրքրութեան շնորհիւ կատար-  
 եալ բուսաբան մը ըլլալով ամենակարող  
 Էակին անսահման իմաստութեան և բա-  
 րութեան վրայ. սքանչանալու պատեհն  
 ունեցաւ :

Օրուան մէկը Լուդովիկոս նաւապե-  
 տին ըսաւ « Պ, Անտօն, այժմ հասկցայ՝  
 կըզին ժամանած օրերնիս ինձ նկատ-  
 մամբ ձեր ըրած գուշակութեան ճշմա-  
 ըրիտ ըլլալը. արգարե հոս ճանչցայ Աստ-  
 ուածային բարեաց անսահմանութիւնը,  
 և համոզուեցայ թէ՛ հոգւոյ փրկու-  
 թեան համար ձեռք առնուած ամեն  
 հոգ ու խնամ անհամեմատ բարձր ու  
 դերասանց են աշխարհային շահասիրու-  
 թեանէ և տքնութեանէ » :

Քանի մը ամիս Լուդովիկոս կըզոյն  
 մէջ այսպէս ժամանակ անցունելէ ետքը  
 Ամբրիկեան նաւ մը եկաւ Պոսթօնէն  
 կըզոյն նաւահանգիստը, որ ատեն նա-  
 ւապետն առաջարկեց իր ընկերին մեկ-  
 նիլ կըզիէն : « Առաւել ևս պիտի հեռա-  
 նաք ըսաւ ձեր հայրենիքէն, բայց եր-  
 թալիք տեղերնիդ ՚ի Լօնտօն ճամբորդող

նաւ կրնաք դանել, Լօնտօն հասնելէդ  
 ետքը անախ ՚ի Համպուրկ ( Գերմանիա )  
 դիւրին է անցնիլ » :

Լուդովիկոս թէ և հաւանեցաւ այս  
 խորհրդոյն՝ սակայն մեծ վարանման մէջ  
 ինկաւ, առ ի՞նչ իրեն համար ընչաւեա  
 վաճառականի մը որդին ըլլալ՝ քանի որ  
 ամեն մասամբ չքաւոր վիճակի մը մէջ  
 կը դաճուէր :

Նաւապետը անոր ախրութիւնը նըշ-  
 մարելով պատճառը հարցուց : « Ի՞նչպէս  
 կրնամ մեկնիլ, ըսաւ Լուդովիկոս,  
 մինչդեռ անցագիրս վճարելու համար  
 չիլին մ'անգամ չունիմ քովս » :

— Ս.յդ ալ հոգ չէ, պատասխանեց  
 նաւապետը. ահաւասիկ ձեզի 200 Կլինէ  
 ( Մեղդիական օսկի ) որոյ ՚ի փոխարէն  
 ձեր մարդասիրութիւնը միայն բաւ կը  
 համարիմ » :

— « Զարմանք, գուցեց Լուդովիկոս,  
 ի՞նչ վտահութեամբ այդ մեծաքանակ  
 գումարը կը յանձնէք անձանօթի մը՝ որ  
 ձեր մարդասիրութեանը շնորհիւ սրժաւ  
 նաւաբեկութեանէ » :

— « Ես ձեր սկզբունքն ու հանգա-  
 մանքը կը ճանչնամ, պատասխանեց նա-  
 ւապետը, այդ բաւ է, եթէ կարողու



Թիւն ունենայի, ալ աւելի կուտայի, քայց հոգ չէ, այս դումարով կրնաք մինչև Լօնտրա հասնիլ: Ես եթէ ձեզի պէս մէկու մը վրայ վստահութիւն չունենայի՝ բոլորովին պիտի հրաժարէի մարդկային ընկերութենէ:

«Միայն սա կը խնդրեմ ձեռնէ որ բարեհաճիք աս դումարն իմ ծերունի մօրս հասցնել որ ՚ի Լօնտօն կը բնակի: Սոցեղութիւն մը տուէք իրեն, երբ Լօնտօն ժամանէք, և սա նամակն ալ անոր յանձնեցէք»:

Լուդովիկոս նաւապետին նուէրն ընդունեց և նամակը գրպանը դրաւ ու հետևեալ օրը հրաժեշտ տալով իրարու բաժնուեցան:

Երկարատոյտ ճանապարհորդութենէ մը ետքը ուղևորը Լօնտօնի նաւահանգիստը հասաւ:

Քաղաք մտածին պէս ուղղակի վաճառականի մը տունը դնաց որ ծանօթ էր իրեն և որ զինքը տեսածին պէս ապշեցաւ մնաց, որովհետև արդէն մեռած կը կարծէր զայն:

Լուդովիկոս անհնարին վիշտ զգաց երբ իր հօրը մահն իմացաւ, և աղա-

չեց վաճառականին որ պէտք եղածին չափ ստակ տայ իրեն:

Վաճառականը սիրով վճարեց անոր խնդրածը, զոր Լուդովիկոս ամենայն դոհութեամբ ընդունելով նաւապետէն առածին կրկինը վճարեց անոր մօրը. սոց զգետտներ շինել տալով հազար ու ՚ի Համպուրկ ճամբորդելու համար նաւ մտաւ. ողջամբ հասաւ ՚ի Համպուրկ, անկէջ ալ սրնթայի ճամբով ժամանեց վերջապէս իր բնիկ քաղաքը:

Լուդովիկոս իր հայրենի տանը ճամբան ձեռք առաւ լի արտմութեամբ, ինքը այնպէս կը յուսար թէ ՚ի սուգ պիտի զոտնէ զայն. սակայն մեծապէս զարմացաւ, երբ լուսազարդ ու պճնեալ դատաւ:

Ուրախութեան ձայներն ու նուազարանաց աղմուկը խեղճին սիրտը գալարեցին. ուստի և առանց իր գալուստը ներսը գանուողներուն իմաց տալու՝ յանկարծ անոնց դիմացն ելաւ, որպէս զի այն անվայել ու անհեթեթ հանդիսին վերջ տայ:





ԳԼՈՒԽ Ե .

ՎԱՐԳԵՆԻՆ .

ԼՈՒՂՈՎԻԿԱ

Լուղովիկա իր հայրենիքը ժամանելէն օր մը ետքը գերեզմանատուն գրնաց իր հօրը շիրմին վրայ արտասուք թափելու համար :

Հանգուցեալն Պ. Սէքմար՝ քիչ ատենէ 'ի վեր այն քաղաքին մէջ բնակութիւն հաստատած ըլլալուն և իր ազգատոհմին յատուկ գերեզմանատեղի մը գնած չըլլալուն համար Լուղովիկոս երկար ատեն շերիմներու մէջ տեղերը թափառեցաւ առանց իր հօրը սասկանը կարենալ գանելու : Աստի դիւթաղին հարցուց իր հօրը շիրմին ուր ըլլալը :

Սյս մարդը՝ որ բարեպաշտ ու հեզահամբոյր ծերունի մ'էր, և Լուղովիկեայ ալ ո՛վ ըլլալը չէր գիտեր՝ թին գետինը խրելով ըսաւ . « եկէ՛ք ցուցնեմ ձեզ, Պարոն, տակաւին վրան քար ալ դրուած չէ : Յաւ է ինձ այս խօսքն ըսել . բայց ի՛նչ օգուտ որ՝ ճշմարտութիւն մ'է յայտ յանդիման :

« Եթէ իր ժառանգորդներուն մնայ՝ մինչև հիմայ դրած չեն և դներիք ալ չունին :

« Սրդէն բարերարոյ Պ. Սէքմար ամենուն մտքէն ելած է » :

Լուղովիկոս իր ազգականաց այս անփութութեան վրայ զայրացաւ և լալով դիւթաղին ետեէն գնաց ու գտաւ իր հօրը շիրմին :

Գերեզման մարդեր պատած էին դագաղը պարփակող հողակոյտը . ասոնց մէջ տեղէն բարձրացած էր չընաղ ու անըման վարդենի մը, զոր Լուղովիկոս իր բոլոր կենացը մէջ տեսած չէր :

Իր խիտ տերեւոց մէջերը կը փայլէին անհամար գեղանի ծաղկունք՝ որոց տերեւներէն իվար ցօլոյ հաղարումէկ վրճիտ կայլակներ կախուած կը շողշողէին առաւօտեան արևուն ճառագայթներէն : Սոյն գերեզմանի վարդենին ամէն խնամք վայելած ըլլալով՝ ո՛չ խամրած ոստ մը և ո՛չ ալ միջատներէ երբէք խոցեալ տերեւներ ունէր վրան :

Խեղճ Լուղովիկոս երկար ատեն անմուտնջ կը մնայր գերեզմանին առջև և ձեռուընկերը սնդապէս իրարու կցած առատ արտօսը կը հոսեցնէր աչերէն :



Բայց վարդենին աչքին առաջքն ըլլալով՝ տակաւ սիրտը հանդարտեցաւ : Բաւական ատեն՝ աղօթեց, առ իւր Հայրն իր երախտագիտութիւնն յայտնեց և տիրոջմէն անոյ հոգւոյն համար յերկինս հանգիտա հայցելէ ետքը՝ զխաթաղին հարցուց թէ ս՛լ է անկած հոն այն վարդենին :

Ծերունին պատասխանեց :

« Օրիորդ Լուիզա հանգուցեալ Պ. Ալքմարի համարակալին՝ Պ. վօլմիւթի սիրուն, պարկեշտ ու բարեպաշտ գուստըրը, որն որ տեսնելով թէ ի յիշատակ հանգուցելոյն պարզ շիրիմ մ'անդամ չեն կանգներ իր մերձաւորները՝ խիստ դառնացաւ :

« Եթէ մենք հարուստ ըլլայինք, ըստ աղնիւ օրիորդը, Պարոն Ալքմարին շիրիմը գերեզմանատան մէջ գտնուած ներուն ամենափառաւորը կըլլոր. սակայն, յարեց տրտում զխօք, դոնէ իմ ձեռքէս եկածը կուգեմ ընել ես. իր դերեզմանին վրայ վարդենի մը սլտտի տընկեմ որ թէ և մարմարեայ քանդակի մը շտի մեծագին չէ, բայց բաւական է որ բարի դիտաւորութեամբ մը տնկուած ըլլայ : Թերեւս սա հոկայ արձանէ մը աւելի

չարժէ վեհանձն սրտերը, մանաւանդ երբ լսեն թէ առաքինի մէկը կը հանգչի աստ :

Այնուհետև հոս բերաւ այդ տուն կը, զոր ծաղկի հետ փոխարինած էր, փափուկ ձեռքերովը ծակ մը փորեց և արտասուօք զայն թանալով հոն տնկեց :

« Առանց այս վարդենւոյն, ըստ « Լուիզա, կանցայտանայ մեր բարեբաւրին դամբանը :

« Նաև Լուիզա պատեց այդ հողակոյտը դալարեօք, զոր միշտ կուգայ անձամբ կը ջրէ ամեն կիրակի կէս օրէն ետքը. և գործի օրերն՝ երեկոյները իր եղբարց և քերց հետ կուգայ արցունք կը թափէ այդ շիրմին վրայ և իր բարեպաշտ երախտագիտութեամբ միշտ սիրտը կը յուզէ : Արդարև, սիրելի Պարոն, շատեր իրենց բարեկամաց այցելութիւն կուտան միշտ շահու ակնկալութեամբ, մինչդեռ վօլմիւթի ընտանիքը, որ ոչ յաւէտ հանգուցեալ Պ. Ալքմարէն բան մը յուսալու տեղի չունի, կուգայ յաճախ այցելելու այդ հողակոյտը՝ ուր անոր տնկանները կը հանդչին : Եւ ուստի իրաւամբ արժանի է դոցա երախտագիտութեանը, փառաց ու պատուոյ : »



Լուսնովիկոս որ այս խօսքերուն յափշտակեալ հետաքրքրութեամբ մը մրտիկ կրնէր՝ աղաչեց ծերունւոյն որ շարունակէ խօսքը : « Ծերունին վ՛օլմիւթ և իր ընտանիքը , յաւելցուց բարեպաշտ դիւթաղը , կը փափաքէին երկար օտեն վայելել զՍւրբմար՝ որոյ շնորհիւ բանի մը կարօտ չպիտի մնային . բայց Աստուած այնպէս կամեցաւ որ այն արդոյ ծերունին ու իր համանման որդին մի և նոյն ժամանակի մէջ հրաժարին աշխարհէս . տարակոյս չկայ որ եթէ ողջ մնացած ըլլային , իրենց անդուծ ժառանգորդաց պէս երեսի վրայ չէին թողուր վ՛օլմիւթեան տունը :

« Թշուառութիւն թշուառութեան ետևէ շղթայացեալ կուգայ :

« Պ. վ՛օլմիւթ , որ խնայողութեամբ ձեռք բերած դրամագլուխը իր բարերարին դրամատունը դրած ըլլալով որոշեալ ժամանակի մէջ շահը կառնէր՝ ամբաստանեցաւ ժառանգորդաց կողմանէ . դատի ենթարկեցին զինքը , պատրուակելով թէ՛ յօգուտ իրեն՝ դրամադրութիւններ շահու տուած է . և այսպիսով Պ. փրաք անոր բոլոր գոյքը ձեռքէն խլեց առաւ : Այն օրէն ի վեր խեղ

ճը կուգ մը շահ առած չէ , և իր դրամագլուխն ալ ոչնչանալու վտանգին մէջ է :

« Դեռահաս Լուիզայի աշխատութիւնըն այս օրուան օրս այդ ընտանեաց միակ հարստութիւնն է . հօրը աչքը կուրնալ սկսած է , գրելու բնաւ կարողութիւն չունի , մայրը միշտ հիւանդոտ է , իսկ միւս փոքրերը տակաւին իրենց ծնողքը խնամելու կարող չեն :

« Աղին օրիորդին հանապաղորդեայ աշխատութիւնն իր ընտանիքը պատուով ապրեցնելու ալ կը բաւէ , ինքը ճարտար և սքանչելի ասղնագործ մ'է : Ես դեռ քանի մը օր յառաջ իր մէկ ձեռագործը տեսայ պատեհութեամբ մը :


« Լուիզա հոս եկած էր վարդենին ջրբերու համար . ինքը աղբիւրէն ջուր բերելու դացած ժամանակ՝ տեսայ որ պզտիկ քոյրը ծնգացը վրայ զամբիւղ մը բռնած՝ դալարեաց վրայ նստած էր . քովը գացի և ուղեցի զամբիւղին մէջինին ինչ ըլլալն հասկնալ . բայց պզտիկը չը թողուց՝ և երբ Լուիզա վերադարձաւ՝ անոր հաղորդեց իմ հետաքրքրութիւնս : Ան ատեն աղին օրիորդը



ձեռագործ մը հանեց ցուցուց՝ որն որ  
չեմ գիտեր ո՛ր աղնուական տիկնոջ կող-  
մանէ ապսպրուած էր : ճերմակ սնդու-  
տի վրայ բանուած վարդէ պսակ մ'էր  
այս գործը . կը զարմանամ որդեակի,  
ինչպէս կրցած է ասեղով շինել . տերև-  
ներն ու ծաղիկները կատարեալ բնական  
և թարմ էին կարծես » :

Լուդովիկոս սոյն պատմութիւնը ու-  
շադրութեամբ լսելէ ետքը վարդ մը  
փրցուց վարդենիէն ու ըսաւ . « սիրելի  
հայր իմ, ես կը յուսայի թէ զիս բազ-  
կացդ մէջ պիտի սեղմէիր հայրական գո-  
րովանօք . բայց այսօր այս դալարաղարդ-  
հողակոյտին ներքև հանգչած կը գանեմ  
դքեզ : Շիրմիդ վրայ ծլած ծաղկած սոյն  
վարդը սրտիս վրայ պիտի պահեմ . թող  
խամբի հոն , ինչպէս խամբած են այս  
աշխարհիս մէջ ինձ համար ամեն հա-  
ճոյք ու զուարճութիւնք » : Աս ըսելով  
կաթիլ մը արցունք թափեց վարդին վը-  
րայ և կուրծքին օղակին մէջ անցուց  
զայն : Յետոյ ոսկի մը տալով գիւթաղին՝  
որ Լուդովիկեայ վերջին խօսքերէն Պ.  
Ալքմարի որդին ըլլալն հասկցած՝ և զայն  
կենդանի տեսնելուն համար մեծապէս  
զարմացած էր , վճռութի տան ս'ւր Ը-

լալն հասկցաւ և հոն երթալու համար  
չտապաւ ճամբայ ելաւ :



ԳԼՈՒԽ Զ .

ԱՅՅԵՆՈՒԹԻՒՆ :

Լուդովիկեայ վերագարձին լուրը  
բոլոր քաղաքին մէջ տարածուած և  
մինչև վճռութեանց ականջն հասած էր :

Պ . վճռութ անմիջապէս դռնէն  
դուրս ելաւ տեղեկութիւններ առնելու  
համար , և այս լրոյն ճշմարիտ ըլլալն  
ստուգելէ յետոյ տուն դարձաւ :

Մեծ ու պզտիկ խնդումի մէջ էին .  
Լուիզա ձեռքի գործը մէկդի դրած՝  
բոլոր միւսներուն հետ՝ հօրը խօսքերուն  
հետաքրքրութեամբ ականջ կը դնէր :  
վճռութ իր պատմութիւնն աւարտեց  
ետքը չնորհակալ եղաւ Աստուծոյ , բայց  
զԼուդովիկոս չկարենալ գանելուն վրայ  
տրտնջաց : Չմտնանք նաև ըսել թէ՛  
գերեզմանատուն երթալ ամենևին մտ-  
քէն անցուցած չէր :

Դեռ Իերունին իր խօսքերը չ'ա-  
ւարտած՝ յանկարծ Լուդովիկոս ներս



մտաւ, զոր երբ տեսան՝ ամենքը միասին  
խնդում թեան ճիշ մ'արձակեցին և ուրա-  
խութեան արասօր թափեցին :

Բարի ծերունին իր սրտին վրայ սեղ-  
մեց զպատանին, մայր ու աղջիկ անոր  
ձեռքերը բանալով արտասուօք թրջե-  
ցին, միւս պղտիկներն ալ Լուդովիկեայ  
հաղուօտին քղանցքն 'ի վար կախուած  
անոր ծնդացը կը վաթտուէին : « Լու-  
դովիկոս, գոչեց Լուիզա, արդարև  
դու ինքդ ես, փա՛նք երջանիկ վայրկե-  
նիս : « Ինչու հայրդ կենդանի չէ, գո-  
չեց Տիկին Վօլմիւթ, և իր պզտիկ որդ-  
ւոց դառնալով ըսաւ. «տհա մեզ համար  
նոր արև մը որ իր ճառագայթիւք պի-  
տի լուսաւորէ զձեզ » : Անդիէն Պ. Վօլ-  
միւթ բազկատարած ըսաւ. « Աստուած  
իմ, Աստուած, այժմաւ հողիս, զի կըր-  
ցայ տեսնել վերջապէս իմ բարեկամիս  
որդին, այս երանաւէտ օրն ալ տեսնե-  
լէ ետքը՝ փոյթ չէ ինձ կուրանալ : Փա՛նք  
Ամենակալին, ցարդ կենդանի մնացած  
ըլլա՛նուդ համար ձեր փրկութիւնը  
հրաշից կարգն է » :

Ճրից՝ Արիօնի պատմութիւնը կար-  
դացած ըլլալով կարծիք կը յայտնէր այս  
մասին՝ թէ թերևս դիփին մը զինքը

կռնակին վրայ առած՝ և 'ի ծովեզր տա-  
րած նետած ըլլար :

Իսկ Ֆրանսուա որ քիչ շատ բնական  
պատմութենէ կը հասկընար՝ շատ երջա-  
նիկ գտաւ զԼուդովիկոս շանաձկան մը  
որկորոյն զո՛հ գացած չըլլալուն համար :

Պզտիկ աղջիկներն ալ կը հարցնէին՝  
թէ մարգարիտ կամ բուստ բերա՛ծ էր  
հետը :

Մոյն սրտաշարժ ու անկեզժ ողջա-  
գուրանքէն ետքը Լուդովիկոս հառաչե-  
լով նստաւ և խնդրեց Պ. Վօլմիւթէն որ  
իւր հօրը վերջին վայրկեանները նկա-  
րագրէ :

Բարի ծերունին յագեցուց անոր  
բաղձանքը, և բոլոր ընտանեաց Լուդո-  
վիկեայ նման անկեզժ արտօսը հասել ար-  
ուաւ :

Յետոյ Պ. Վօլմիւթ ժառանգորդաց  
բարբարոսական ընթացից, մասնաւորա-  
պէս Պ. Փրաքի վրայ խօսք բացաւ :

Երկու ժամ խօսակցելէ ետքը Լու-  
դովիկոս իր մարդասիրութեամբ քաջա-  
լերեց և յուսադրեց զՎօլմիւթեանս, և  
ապա ելաւ իր գործերուն ետեւէն գնաց :



ԳԼՈՒԽ Է.

ԽՈՐՀՈՒՐԳ. ՅՆՈՐԳ.

Պ. Փրաքի տան մէջ մեծ անձկութիւն մը տիրել սկսած էր. սրբահանգէսէն ետքը՝ Պ. տը փրաք և իր ամուսինը, Լուսիա իրենց դուստրը և մօրաքոյրնին, զոր խորագէտ մէկը կը համարէին՝ սրահին մէջ մնացին և իրաց սոյն վիճակին մէջ ինչ ընելիքնին մտածելու համար խորհուրդ կազմեցին :

« Աս տղուն վերագարձէն աւելի մեծ գժբադդութիւն չէր կրնար լզուլ գըլխուս, ըսաւ Պ. տը փրաք. տունը գըլուխնուս իջնէր՝ ասկէ աղէկ կըլլար :

« Եթէ ժառանգութիւնը ետ տալ հարկ ըլլայ՝ մինչև մուրացկանութեան պիտի հասնի վիճակս. արդէն ունեցածիս կըրկինը ծախսած ըլլալուս ձեռքս բան մը չմնայէն զատ՝ պարտական ալ պիտի կոնամ » :

— « Տէր ողորմեա, տէր Աստուած, ըսաւ Տիկին տը փրաք, պիտի ծախսե՞նք ուրեմն մեր գեղեցիկ կառաց սպասք, և հետիոտան պիտի երթանք թատրոն

հասարակ մարդոց պէս : Այդ աստիճանի ալ զրկանաց ու ամօթոյ դիմանալ իմ բանս չէ » :

— « Թատրոն երթալու պէտք չունինք՝ ըսաւ էրիկը, այսպիսի երեկոյթի մը հետեանքը ամբողջ շաբաթ մը կրնայ տունը պահել զմեզ » :

Իսկ օրիորդ Լուսիա հառաչելով և տղերն յարտօսը թորելով իր ականակուռ մատանին կը դիտէր. « Ինչ, աս գեղեցիկ մատանին ալ ետ տալու է, ըսաւ, ո՛չ ո՛չ, անշուշտ Պ. Ալքմարեան վեհանձնաբար ինձ պիտի շնորհէ իր մօրը զարդերը » :

« Անմիտ, ըսաւ հայրը, դոհարեղէն, զարդ միտքէդ հանէ՛, ա՛լ մեզ համար չեն ատոնք » :

Վերջապէս մօրաքոյրնին վճռողական ձայնիւ մը ըսաւ. « այդչափ յուսահատութիւն անտեղի է, ես ամեն ցաւոց գարմանը դիտեմ, բոլոր ձեր այդ վարանմունքը կրնայ բառնալ ամուսնութիւն մը : Զի ամուսնութիւնը՝ ոչ միայն կատակախաղերու, այլ ահաւոր և արիւնուշտ եղեբախաղերու անդամ կրնայ վերջ տալ : Մի՛ հողայք, ամեն բան իր ներկայ վիճակին մէջ կը մնայ, բաւական է որ օրի-



որդ Լուսիա ամուսնանայ Պ. Ալքմարեանի հետ » :

Պ. տը փրաք՝ տարակուսական դիմօք գլուխը թոթփեց, աիկին տը փրաք յաւելցուց թէ Պ. Ալքմարեան աղքատ ընտանիքէ աղջիկ չառներ :

« Հոգ մ'ընէք, սիրելի մայրիկ, ըսաւ Լուսիա խորխտ վատահու թեամբ մը, ամիս մը չանցած ան ձեր ոտքը կուգայ և աղերսանօք իմ աջս կը խնդրէ ձենէ : Իրաւ է՝ թէ Պ. Ալքմարեան սղաւոր ըլլալով՝ քաղցրաբանութեան կամ հատուանաց ալ անդգայ է . ասկէջ զատ՝ խնայող անտեսագէտ մը ըլլալուն՝ իր ամուսնոյն ամեն սիրածը չպիտի ճարէ գտնէ . բայց հոգ չէ, այդ ալ վերջը կը խորհինք » :

Աս խօսքերէն ետքը ամբարհաւած դիմօք հայերեոյն դիմացն անցաւ և ինքզինքը վերուստ ի վայր գննելով՝ « տաբակոյս չունիմ, ըսաւ, որ զիս պիտի սիրէ » :

Առտուան վրայ ամեն մարդ ննջելու գնաց, ինչպէս ըստ սովորութեան, բայց այս անգամ չկրցան հանդիստ քուն քնանալ : Քանի մը ժամ ետքը նորէն գումարեցան և սկսան վերստին խորհրդակցիլ ինչ դիրք բռնելիքնուն վրայ : Զեր-

մաջերմ վիճաբանութենէ մը ետքը վերջապէս որոշեցին վառաւոր ընդունելութիւն մ'ընել Լուդովիկեայ՝ առանց անոր երեւման վրայ թեթե յուզմունք մը յայտնելու :

Պ. տը փրաք ՚ի պատիւ Լուդովիկեայ տրուելիք հանդիսի մը վրայօք խորհրդակցիլ առաջարկեց, և մինչ ասոր վրայ կը խօսակցեին, Լուդովիկոս ներս մտաւ, զոր երբ տեսան՝ լռեցին և զայն դիմաւորելով՝ իր հրաշալի փրկութիւնը շնորհաւորեցին :

Մօրաքոյրնին անմիջապէս ծանոցանոր երջանիկ վերադարձը հանդիսի մը տօնելու դիտաւորութիւննին . բայց Պ. տը փրաք սորա աճապարանքը տեսնելով յանդիմանեց զայն, որովհետեւ այսպիսեաւ չէր կրնար ուզած խաղը խաղալ իր սիրելեոյն Լուդովիկեայ :

Պատանին գէմ չելաւ այս հանդիսի խորհրդոյն, բայց սա պայմանը դրաւ որ իր անուամբը տրուի այդ հանդէսը և իր վաղեմի բարեկամներէն մէկ քանին ալ հրաւիրէ : Նաև խնդրեց որ տասնեհինգ օր ետ ձգուի, որպէս զի այսչափ ատեն իր հօրը մահը ողբայ և իր բոլոր կենաց բարեբաստութիւնն յար-




գարող գէպքի մը տօնախմբութեանն յատկացուի այդ հանգէսը :

Փրաքեանք հաւանեցան սոյն խորհրանաց և Լուսիա իր մօրաքեռ ականջն 'ի վար « հիմա հասկցա՞ք, փախաց :

Այն օրէն 'ի վեր Լուսիա՝ Լուգովիկեաց սիրելի հանգիստանալու համար այնչափ անհաճոյ ու անկարգ միջոցներու գիմեց՝ որ վերջապէս պատանին լաւ կերպով ճանչցաւ անոր արտաւոց բարքըն ու վարքը :

Եանձադամիտը իր յաղթանակը կատարելապէս ձեռք բերած կը կարծէր, և իր հարսնախօսութեան թուականը կը համարէր այն ապագայ հանգիստին օրը :



ՓԼՈՒԽ Ը .

ՀԱՐՍՆԱԹՍՈՒԹԻՒՆ .

ԱՌՄՔԻՆՈՒԹԻՒՆԸ ՆԱԹՄԵԾԱՐ Ի  
ՀԱՐՍՏՈՒԹԵՆԷ .

Վերջապէս եկաւ հասաւ հանգէսի օրը :

Լուգովիկոս իրիկուան դէմ վզմիւթի տունը գնաց և առաջարկեց որ ընտանեօք հանդերձ շրջագայութիւն մ'ընեն :

Լուիզա կուզէր սակաւ ինչ զարդարուիլ . բայց Լուգովիկոս դէմ կեցաւ և ստիպեց որ իր ամենօրեայ պարզ հագուստները միայն հաղնի :

Տունէն դուրս ելլելով, երբ գերեզմանատանն առջևէն կանցնէին՝ « ներս մտնենք, ըսաւ Լուգովիկոս, ատենք անդամ մը հօրս գերեզմանը » :

Լուիզայի սիրտն այս պահուն ուժգին կը բարախէր . զի Լուգովիկոս վարդենւոյն վրայ ամենեւին խօսք բացած չէր տակաւին, և Լուիզա կը վախնար որ չիմանայ թէ ինք հանապազորդ այն վայրը կ'այցելէ :

Վերջապէս Պ . Սլքմարի գերեզմանին դուռն հասան՝ ուր Լուգովիկոս գլխարկը հանեց և երկար ատեն լուսմունչ կեցաւ :

Սմենայն ինչ հանդարտ ու անձայն էր այն պահուն, հովը միայն վարդենւոյն տերևոց մէջէն կը մրմուար և անոր թերթերը կը լսէր կը թափէր մարդագետնին վրայ :



Սմեհունն աչքն արտասուօք էր լցուած :

Լուդովիկոս վերջապէս յուզեալ ձայնով մը նոյն լուսթիւնը խղերով ըսաւ . « Լուիզա, հօրս մահն իմանալէս ետքը իմ առաջին միտքս թարութիւնս եղաւ այս վարդենին տեանայս, զոր քու ձեռքերդ են անկած :

« Արդէն ես միշտ գոված էի սրտիդ ամբծութիւնը, բայց այն օրէն 'ի վեր դքեզ աւելի լաւ ճանչել սովորեցայ : Վերադարձիս առթիւ զգացած բերկրութիւնդ ուսոյց ինձ սիրել զքեզ . մեր զիրար տեսներէն ի վեր տասն և հինգ օր անցաւ, ա՛լ այժմ կուզեմ քեզ նկատմամբ ունեցած զգացումներս յայտնել առանց քեզ վշտացունելու :

« Եթէ հայրս կենդանի ըլլար զքեզ, իրեն կը ներկայացնէի ու կ'ըսէի, «հաւաստիկ իմ ընտրած ամուսինս, շնորհէ մեզ, հայր, քու օրհնութիւնդ . բայց այսօր Լուիզա, ահա իր գերեզմանին վրայ կը բերեմ զքեզ որ թէ ինձ, թէ քեզ համար հաւասարապէս նուիրական է, և ծնողքէդ քու աջդ և իրենց օրհնութիւնը կը խնդրեմ » :

Մայն խնդրանաց վրայ այնչափ զգածուեցաւ Պ. Վօլմիւթ՝ որ չկրցաւ անմի-

ջտպէս պատասխանել . իր կինը ուրախահան արտօսը կը թափէր, և Լուիզա ալ իր մտին՝ ուրախութիւն յայտնեց Լուդովիկեայ առաջարկութեան համար :

— « Պ. Սլէքմարեան, ըսաւ Վօլմիւթ, ի՞նչպէս կրնայ ըլլալ այդ, իմ աղջիկս չըբաւոր մ'է, իսկ դուք միլիօններու տէր էք այսօրուան օրս » :

— « Եթէ ուրիշ առարկութիւններ չունիք ընելու՝ ես ալ իմ փափաքս արդէն ըրացած կը համարիմ : Ինչպէս որ դուք ալ խոստովանեցաք՝ ինձ պէս ունևորի մը համար հարուստ կին պէտք չէ . ունեցածիս մէկ հարիւրորդն իսկ կը բաւէ մեզ՝ երջանիկ ապրելու համար : Մանաւանդ թէ հայրս ինձ ուսոյց հարստութենէ նախամեծար համարել առաքինութիւնը . սոյն խրատը մտիկ ըրած օրէս 'ի վեր համոզված եմ՝ թէ միայն արծաթով երջանիկ չըլլար մարդ : Լուիզայի սիրտը ինձ համար գանձ մ'է » :

Սյս խօսքերէն ետքը՝ վարդ մը վերցուց և զայն մանկամարդ օրիորդին մազերուն մէջ ղետեղելով՝ ըսաւ . « Եթող Լուիզայի միակ օժիտն ըլլայ այն վարդենին, որով իմ սիրելի հօրս գերեզմանը չըբաւորեց նա, և անոր մի ծաղիկն ալ իր



հարսնախօսութեան ընծայն ըլլայ: Օրհնեցէք զմեզ, սիրելի ծնողք խմ” .

—“ Աստուած ափռէ իր օրհնութիւննը ձեր վրայ, սիրելի որդեակք մեր, ըսին վօլմիւթ և իր կինը ձեռք դնելով ամուսնի վրայ . երջանիկ ըլլայք երկօքին” :

—“ Լուիզա, յարեց վերստին Լուդուփիկոս . հօրս շիրմին վրայ կը խոստանամ յաւիտենական սիրով սիրել զքեզ: Իցիւթէ մեր զաւակունք ալ կարենային մեր շիրմին վրայ արտօսը հեղուլ . . . . »

Լուիզայի սիրտն ելաւ այս խօսքերուն վրայ և լալով Լուդուփիկեայ գիրկը նետուեցաւ :



### ԳԼՈՒԽ Թ .

#### ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՏԻԺԸ :

Սոյն խորհրդաւոր արարողութենէ ետքը յուզեալ սրտիւ դուրս ելան այն տխուր վայրէն և առանց ճամբան խօսք ընելու հասան մինչև Լուդուփիկեայ հօրը տանն առաջը :

« Հոս ինձ կըսպասեն, ըսաւ Լուդուփիկոս, կը ցաւիմ որ այս օրս չպիտի կարենանք առանձին անցունել, վասն զի ժամադրութիւն ըրած և խօսք տրուած եմ: Մտնենք ներս ուրեմն .

Պատանին՝ իր դեռահաս առնտկոյսին թեւ մտած՝ ներս մտաւ, երկու ծերունիներն ալ ետևնուն կերթային: Տանը սրահը շքեղապէս զարդարուած էր . փրակեանք իրենց հիւրերը ի դղրդիւն թմբկի և փողոյ դիմաւորեցին, բայց Լուդուփիկեայ, Լուիզայի հետ ընկերանալը խիստ անհաճոյ տպաւորութիւն մ'ըրաւ փրակեանց վրայ:

« Սա միւսներն ինչ կուզեն հոս, մըմուսաց Պ. տը փրաք, « մեր դասին համար ըլլալու է կերուսց թէ . անշուշտ իրենց թշուառութիւնը Լուդուփիկեայ ալ հասկցուցած՝ և հետը հոս են եկած ո՞վ գիտէ ինչ երազելով:

Ամենէն աղէկը՝ քանի մը ոսկի տալու էի սա մուրացկան վօլմիւթին և . . . ձիքս պրծելու էի ձեռքէն » :

Տիկին տը փրաք ալ՝ բարկութենէն ատամունքը կրճտելով, « շատ բան, ըսաւ, դործի հագուստներով աս կար կարող աղջիկը հոս բերել ինչ կը նշանա-



կէ . ասանկ փեռայ իմ բանիս չղար » :  
 Իսկ սիդապանձն Լուսիա՝ զանոնք  
 տեսածին պէս երեսին գոյնը նետեց ,  
 բայց ինքզինքը բռնելով եկաւ իր փա-  
 ռաւոր հաղուսաները տարածեց և նրա  
 տաւ անշուք Լուսիայի քով յոր յառեալ  
 էին ամենուն աչքը , և որ իր բոլոր ան-  
 զամսիք կը դողայր :

— « Վայել լուծիւնը կը պահանջէ որ՝  
 բնաւ մօրաքոյրն ինչ . աւ . ք . ձ . ձ . մուրաց-  
 կանուհին իր նմաններուն ընկերութեանց  
 մէջ յաճախէ , հոս գալը՝ անշուշտ մու-  
 րալու համար է : » Ս . յնուհեաւ նշանա-  
 ցի կերպով աղբարտրեց Լուսիային՝ որ  
 պէտք եղած մեծարանօք պատուէ զլու-  
 դովիկոս : Նուագարանաց դղրդիւնէն  
 Լուդովիկոս չկրցաւ լսել իր մօրաքեռ-  
 խօսից շարունակութիւնը , ուստի սրա-  
 հին դէպ 'ի խորը յառաջանալով լուսեց  
 նուագածունները : Լուսիա իր աջ կողմէն  
 չէր զատուեր , և ունայնամիտն Լուսիա  
 ստիպուած էր ձախակողմը բռնել : Լուսի-  
 ղայի քովն էին Պ . և Տ . վօլմիւթ , իսկ  
 Լուսիայի քով Պ . և Տ . տը Բրաք . հան-  
 դիսականք ալ շրջանակ կազմած էին  
 սոցա շուրջը :

« Ս . յս միջոցին Պ . տը Բրաք խօսք

առնելով ըսաւ , » սիրելիք իմ Լուդովի-  
 կոս , այս աղնիւ անձինք հոս բերելուդ  
 սխառճառը դիտեմ , իրենց հետ ունե-  
 ցած դատիս համար է անշուշտ : Ճշմա-  
 րիտը շատ ցաւած եմ աղնիւ Պ . վօլմիւ-  
 թի և իմ մէջ ծագած սոյն վէճին առ-  
 թիւ , բայց ձեր սիրոյն համար ամեն զո-  
 հօղութիւն յանձն կառնում , դատես  
 կանցնիմ , և այս երեկոյ իր պահանջած  
 դուժարը կը հատուցանեմ : Թող հոս  
 դայ դանձադահը :

— Մի՛ աճապարէք , Պ . տը Փրաք , ը-  
 սաւ Լուդովիկոս կատարեալ պաղարիւ-  
 նութեամբ մը , այդ գործը ձերը չէ ,  
 իմն է , Պ . վօլմիւթ իր առնելիքը կրնայ  
 առնուլ : Իմ հոս գալուս պատճառը դու-  
 շակել քիչ մը դժուար է ձեզ համար :  
 Պէտք է զխնայք՝ որ չիտակ դերեզմա-  
 նատունէն եկանք հոս :

Գունատեցաւ Պ . տը Փրաք այս խօս-  
 քին վրայ , և քիչ մնաց՝ որ իր անճոռնի  
 բնութիւնը պիտի յայտնէր :

« Ի՞նչ է այս , ամենն ալ կատարած  
 են մեզ դէմ , միմուաց քթին տակէն ,  
 յետոյ ցաւակցական ձայնիւ մը ըսաւ .  
 « չիտթած մնացած եմ սիրելի եղբօրոր-  
 դիս , 'ի յիշատակ ձեր մեծանուն հօր



փառաւոր շիրիմ կանգնելու դիտաւորութեանմէջ չը յաջողելուս համար, արդարեւ փափաքելի էր ինձ այս պահուս առաջնորդել զՁեզ հոյակապ շիրմի մը առաջը և պարտաւորութիւն մը կատարած ըլլալու վտեմ խրոխտութեամբ յսպուշ կրթել զՁեզ. բայց ինչ օգուտ, արհեստաւորները հաստ գլուխ մարդիկ են, որոց հետ համաձայնիլն ալ անհնարին դժուարէ: Չը մոռնանք նաև ըսել թէ՛ այս մասին մեր ազգականաց բնաւ հոգերնին չեղաւ, և խիստ մեծածախ գտան այդ յիշատակի արձանը. որ արդարև թագաւորի մը վայել փառաւորութեամբ պիտի կանգնուէր: »

« Եւ ես ինքնին կը վկայեմ, ըսաւ Լուսիա ինքզինքը բանի մը տեղ դնելով, թէ՛ իրաւամբ արժանի էր այդպիսի պատուոյ մը առաքինին Պ. Սլքմար: »

« Բանիցս այցելած եմ այն տխուր վայրը. ուր իր ածիւնները կը հանգչին. դեռ քանի մը օր յառաջ գացի հոն և գառն արցունք թափեցի: » Աս ըսելով Լուսիա թաշկինակով երեսը դոցեց՝ արտասուքը սրբել ձևացնելով: »

Լուգովիկոս թէ և Պ. տը փրաքիխօսած գատին համար բարկացաւ. բայց

տուաւել ևս ի զայրոյթ յուզեցաւ Լուսիայի անպատկառ անամօթութիւնը տեսնելով: « Օրիորդ, ըսաւ, միշտ վեհանձըն ձայնիւ, քանի որ կրսէք թէ երկու երեք օր յառաջ գերեզմանատուն գացած էք, ուրեմն տեսած ըլլալու էք հօրս գերեզմանին վրայի փոքրիկ յիշատակարանը: Ես տեսայ զմայլեցայ. կը փափաքիմ ձեր կարծիքն ալ հասկնալ, ի՞նչպէս, ճաշակնուդ յարմար գտա՞ք զայն: »

Լուսիա աս խօսքին վրայ գունատելով պատասխանել փորձեց, բայց՝ « ես գացի . . . չգիտեմ . . . պէտք է . . . » և այլ ասոնց պէս քանի մը անկցորդ ու անխմաստ բառեր թոթովելով չկրցաւ յառաջ տանիլ խօսքը, և վայրկեան մը լուութիւն տիրեց սրահին մէջ: »

Լուսիա այս պահուն կը փափաքէր՝ որ գետինները բացուէին և զինքը իրենց ծոցն ընդունէին: »

Մօրաքոյրնին անմիջապէս փութաց իր քեռորդուոյն սխալն ուղղել: « Չարագուշակ արծիւ մ'է այս տղան ալ, ինչ է, ըսաւ մտօքը. անցեալ օրուան պարահանդէսն իր անակնկալ ներկայութեամբը վրդովեց. այսօր ալ աս հանդէսը




տակն ի վերայ ընելու երամ եկած է : »

Եւ ապա խօսքը Լուսիային ուղղելով ըսաւ , « աղջիկս , սխալեցար , կուղէիր ըսել թէ Պ. Ալքմարեանի՛ այն շիրիմը կանգնելէն քանի մը օր յառաջ դացիր գերեզմանատուն » :

« Եւ դուք կը սխալիք , տիկին , գոչեց Լուդովիկոս , ոչ օրիորդ Լուսիա , ոչ դուք , և ոչ ալ Պ. տը ֓րաք , ու իր ամուսինը դէթ միանգամ իսկ չէք դացած գերեզմանատուն . վասն զի այն աղջիկ յիշատակարանը քանի մը ամիսէ ՚ի վեր հոն ըլլալուն՝ բնականաբար պիտի կորենայիք տեսնել զայն : Այսօր , այս վայրկենիս կուղեմ ամենայն ինչ բացայայտ խօսիլ , յաւելցուց Լուդովիկոս իր խօսքը անպառ ձայնիւ մը շարունակելով , խորին ցաւ ՚ի սիրտ տեսայ որ դուք , Պ. ֓րաք , զլացած էք պարզ քարմ՛անգամ գնելու հօրս գերեզմանին վրայ որ ամէն մասամբ իր քաղաքակցայ մեծարանացն ու համակրանաց արժանացած՝ և ձեզ ճոխ ժառանգութիւն մ՛է թողած : Ասի անմտութեան , անզգայութեան և ապերախտութեան սահմանն ալ անցած է :

« Գալով ձեզ , Օրիորդ Լուսիա , դուք

ալ ամօթահար լինելու էիր ամենէն նուիրական բաները անճոռնի ու անարդ սըտակօտութեամբ պղծելուդ համար : »



### ԳԼՈՒԽ Ժ.

#### ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ Է ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ :

Լուդովիկոս արդար անկեղծութեամբ ու զայրոյթով այսպէս իր ազգականաց արտառոց արարքը իրբև դատակնիք անթեթեթ բարուց աննոց ճակին զարնելէն ետքը՝ հանդիսականաց դառնալով ըսաւ . « սոյն ակմբիս մէջ իմ հօրս բարեմասնութեանց վրայ անկեղծօրէն սքանչացողներ կը տեսնեմ , ինչպէս նա և այնպիսիներ՝ որք անդասին իմ մանկութենէս ՚ի վեր անկեղծ համակրանք մ՛ունին վրաս . իմ վերադարձիս առթիւ իրենց զգացած բերկրանաց համար չընորհապարտ կը դանեմ ինքդինքս այդպիսեաց և զոհ եմ որ բարեհաճեցան իրենց ներկայութեամբը պատուել իմ դիտաւորութեանս համար տրուած սոյն հանդէսը :



«Կը փութամ այդ ազնիւ տեարց յայտարարել թէ կրկնակի երջանիկ է այս օրս ինձ համար : Օրիորդ Լուիզա Վօլմիւթեանի հետ իմ հարսնախօսութեան օրն է այս օրը : Պատիւ ունիմ աւասիկ զինքը ձեզ ներկայացնելու » :

Եթէ շանթ իյնար սրահին մէջ տեղ, ասկէ աւելի չէր կրնար բերանարաց թողուլ զհանդիսականս : Պ. և Տ. փրաքեան սասանեցան, իսկ Լուսիա՝ ամօթահարութենէն ու կատաղութենէն լալ սկըսաւ . մինչև մօրաքոյրնին իսկ հակառակ իր բնութեան՝ չկրցաւ սրանեղութիւնը ծածկել : Իր սովորական արագադարձ լեզուն թսթովել սկսաւ, և անիմաստ միավանկներ դուրս կուտար բերնէն : « Ի՞նչ » . . . գոչեց մէկէն 'ի մէկ, և վայրկեան մը վարանելէն ետքը՝ ըսաւ . կեցիր . . . ա՛հ . . . զարմա՛նք . . . » :

— « Կը տեսնեմ որ՝, յարեց Լուիզովիկոս իշխանական ձայնիւ մը, իմ այս ընտրութիւնը գրեթէ ընդհանուր զարմացման մ'առիթ եղաւ : Այո՛, իմ տեղս եթէ ուրիշն ըլլար՝ թերևս այսպէս չէր ըներ . թերևս Օրիորդ ին ( զլիւսիա ցուցնելով ) պերճ զարդերն ու պտճուճանքը շատերու սիրան հրապուրեր և Լուի-

զայի պարզ հաղուստն աչքի անդամ՝ չը զարնուեր : Բայց իմ խելքս չհասնիր՝ թէ ի՞նչպէս խելացի մէկը կրնայ կարևորութիւն տալ այդ վայրուն ու սնտի զարդուց : Լուիզայի մաղբըրը զարգարող պարզ վարդըր աւելի մեծ արժէք ունի ըստ իս՝ քան այդ ակնախաղ ագաւմանդները : Գիտցէք, հանդիսական Տեարք, որ այն զոր ամուսին ընտրեցի ինձ՝ վարդենի մը անկած է հօրս գերեզմանին վրայ . ան վարդենին եղաւ միակ պատճառ իմ սոյն ընտրութեան » :

Այնուհետև յիշեց Լուիզովիկոս՝ Լուիզայի իր հօրը գերեզմանին մատուցած խնամքը . « ինչպէս կրնայի՞, ըսաւ, բարեմասնութիւններն անձանօթ կին մը նախամեծար համարել առաքինի աղջկանէ մը որ իր ձեռագործաց չնորհիւ կապրեցնէ իր ընտանիքը : Ես նանրութենէ նախամեծար համարեցի հեղութիւնն ու համբերութիւնը և չուզեցի իմ ապագայն բաղդակից ընել այնպիսի դժօսասէր և սնափառ աղջկան մը սպագայ կենցաղոյն՝ որոյ համար ընտանեկան կեանքը ծաղրելի բան մ'է, և որ ըստ ամենայնի անկարող է իր ամուսնոյն երջանկութիւնն յարգարելու : Այո՛, եթէ



Օրինորդ Փրաքեան տյնչափ աղամանդ ներով զարդարուած ինձ ներկայանայր, որչափ ազքատիկ է լուիզա՝ դարձեալ այս վերջինը պիտի ընտրէի ինձ ամուսին. ընտրութիւնս լաւ է, ապահով եմ այս մասին: Մաքուր սիրտ մը մարդուս միակ արժանիքն է:

«Քաղդուորն այն է որ կը յաջողի այդպիսի սրտի մը տիրանալու:

«Իմ մասին՝ ես քաջայայտ եմ որ օրհնութեամբ տեառն՝ ամենակատարեալ հանդիսառ ու երջանկութիւն պիտի վայելեմ:

«Ներեցէք, ըսաւ խօսքը շարունակելով, զգացումներս կրակոտ ձեերով յայանելուս համար, բարկութենք յաղթեց խոհեմութեան:

«Սյժմ պէտք է ինձ յանձնուիմ իմ բոլոր ստացուածքս՝ որոց մեծագոյնն մասը Պ. ալ Փրաքի ձեռքն է: Դատարանըն այսպէս վճռեց:

«Արդ, քանի որ կրցայ իմ ըղձիցս ու իրաւանցս տէրն ըլլալ շնորհիւ արդարութեան՝ կը հրաւիրեմ բարեկամներս ՚ի մասնակցութիւն իմ ուրախութեան:»  
 Պ. Ալքմարեանի ճշմարիտ բարեկամները ծափահարեցին իր որոշումը և զայն շը

նորհաւորեցին իր երջանկութեանը համար. իսկ Փրաքեանք և աղնիւ երիտասարդին միւս ազգականները մէյ մէկ կողմ քաշուեցան և համազուեցան թէ ամարդութիւնն ու ամբարաւանութիւնը երբէք լաւ հեռանքներ չեն արտագրեր:

Լուդովիկոս իր բարեկամաց հետ վայելուչ կէրպով անցուց այն երեկոյն, բնաւ մէկու մը մտքէն չանցաւ պարել և ժամը տասնին ցրուեցան:

Լուդովիկոս ալ իր սիրեցելոյն Լուիզայի հետ ամուսնութեան օրը սրտչեց և ՚ի հարսանիս հրաւիրեց հանդիսականները:

Սոյն մտաց հարսանեկան տօնը քիչ ատենէն ելլանիկ կերպով կատարեցաւ,

Լուդովիկոս շատ անգամ իր կնոջ կը սէր. «Սոյն վարդենին անտատասկ վարդեր ծլեցուց ինձ համար, եթէ դու այն չքնաղ տունկը չը անկէիր իմ հօրս դերեղմանին վրայ, սիրեցեալդ իմ լուիզա, ո՛ւր պիտի դանէինք մենք այս երջանկութիւնը:

— Քու որդիական սէրն է՝ որ երախտագիտական այդպիսի պարզ յիշատակի մը արժէք կուտայ, պատասխանեց Լուի-




Չա, եթէ ազդականներդ անոր տեղ  
մեծածախ շիրիմ մը կանդնէին՝ մենք  
զիրար չպիտի կարենայինք վայելել :

—Ձեր ազնիւ զգացումներովը միայն  
կրնաք իրարու արժանանալ, յաւելցուց  
լուիզայի մայրը :

—Եւ Աստուած է, ըսաւ Պ. վօլմիւթ  
որ չնորհեց մեզ այսպիսի երջանկու-  
թիւն մը, և որ պարզ վարդենի մը այս-  
չափ երանութեանց միակ պատճառ ե-  
ղաւ :

Վ Ե Ր Զ







U. 2.

No 3157